600.0263.27.06.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2018 թվականի №263Ա
քաղ. Երևան

«ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և «ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հունիսի 18-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը և Սյունիքի մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրել 5560-5565ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն՝ մինչև 2028 թվականի հունիսի 13-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Սյունիքի մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրվող 5560-5565ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. «ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում

№900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունիսի 28-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
27 հունիսի 2018թ.